



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն  
Շ Ի Ր Ա Կ Ի Մ Ա Ր Ջ Պ Ե Տ

<< 08 >> \_\_05\_\_ 2014թ.

Բ. Գյումրի, Գ. Նժդեհի 16

N: \_\_\_\_\_

հեռ. (0312) 3-26-10, ֆաքս (0312) 3-50-77

Հարգարժան երկրապահներ.

ՀՀ Շիրակի մարզպետարանի աշխատակազմի և անձամբ իմ անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Երկրապահի օրվա կապակցությամբ:

Անգնահատելի է Ձեր ունեցած ներդրումն ու ավանդը Արցախյան ազատամարտի հաղթանակի կերտման գործում:

Մենք խոնարհվում ենք բոլոր այն հայրենասեր, խիզախ հայորդիների և նրանց հերոս մայրերի առջև, ովքեր իրենց կյանքը նվիրեցին ազատության վեհ գաղափարի համար:

Մայիսյան այս գեղեցիկ ու անկրկնելի տոնի կապակցությամբ ցանկանում եմ Երկրապահ կամավորականներին, նրանց ընտանիքներին քաջառողջություն, անձնական երջանկություն և հաջողություններ՝ ի փառս մեր Հայրենիքի բարօրության ու հզորության:

Ամենաջերմ բարեմաղթանքներով՝

Շիրակի մարզպետ Ֆելիքս Յուլակյան